# Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 7-րդ հոդվածի 8-րդ կետի՝

- առաջին ենթակետը լրացնել նոր երկրորդ պարբերությամբ.

«Արևային և հողմային էլեկտրակայանների համար նախատեսվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը քսան միլիոն դրամ գերազանցելու դեպքում՝ քսան միլիոն դրամը գերազանցող գումարը մինչև քսան տարվա ժամկետում, համայնքի ավագանու որոշմամբ ընդունված՝ տարաժամկետ վճարման ժամանակացույցին համապատասխան:»

- երրորդ ենթակետը `

ա) «ջերմոցային» բառից առաջ լրացնել «արևային և հողմային էլեկտրակայանների» բառերով,

բ) «օգտագործվող» բառից հետո լրացնել «(նախատեսվող)» բառը, իսկ «համարվում է փոփոխված`» բառերից հետո լրացնել «պարզեցված կարգով՝ միայն» բառերը,:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: